2022-2023 ՈՒՍՏԱՐԻ «ՕԼԻՄՊԻԱԿԱՆՆԵՐ» ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԾՐԱԳԻՐ ՔՆԱՐ ՄԱԹևՈՍՅԱՆ

Շաբաթական 1 ժամ

1-ին կիսամյակ 15 ժամ, 2-րդ կիսամյակ 19 ժամ

Երևան-2022

Մաթեմատիկայի խմբակի նպատակներն են.

ա/ բացահայտել դպրոցի այն աշակերտներին,որոնք առանձնահատուկ հմտություններ են ցուցաբերում ,,Մաթեմատիկա,, առարկայից,

բ/ նրանց մեջ խորացնել տրամաբանական մտածելակերպ,

գ/ յուրահատուկ վերաբերմունք, հետաքրքրասիրություն հանդեպ առարկան:

Հիմնական խնդիրներն են՝

1. Տրամաբանական մտածելակերպ ձևավորել սովորողների մեջ,որոշակի հմտությունների օգնությամբ և կիրառմամբ հասնել այն բանին,որ աշակերտներն իրենց մաթեմատիկական գիտելիքներն օգտագործեն դպրոցական,տարածքային և հանրապետական օլիմպիադաներում:
2. Ձեռք բերած մաթեմատիկական գիտելիքներն օգտագործել և կապ հաստատել այլ առարկաների հետ,տրամաբանական,վերլուծական խնդիրներին ցուցաբերել առանձնահատուկ մոտեցում:

Տարաբնույթ խնդիրների քննարկումը հետապնդում է կարևորագույն նպատակ՝աշակերտների մեջ զարգացնել ոչ միայն տեսողական, այլև հիշողական վերլուծական տրամաբանություն:Խնդրի լուծման ճանապարհները տարբեր են:Սովորողի մոտ զարգանում է վերլուծական միտքը :

Հետազոտական աշխատանքներ են տարվում որոշ խնդիրների արդյունքները բացահայտելու ճանապարհին: Սովորողի պրպտող միտքը դառնում է տեսանելի:

Վերջնարդյունքում խմբակը փորձում է աշակերտի մեջ սերմանել իրեն իսկ հաղթելու և իր գիտելիքի օգնությամբ անհայտ պատասխանները բացահայտելու:

Ստորև ներկայացվում է թեմաների ցանկը՝առանձնացված ըստ տիպերի և այն ժամաքանակները,որոնք տրվելու են նման խնդիրների լուծմանը:

#	Թեման	ժամաքանակ
1	Ավելորդ պատկերի գտնելը համաչափ պատկերի միջև:	1
2	Դիրքային խնդիրների քննարկում,ամփոփում:	2
3	Համադպրոցական օլիմպիադայի 5-7 դասարանների խնդիրների քննարկում:	2
4	2021-2022 ուս.տարում անցկացրած ,,Կենգուրու,,մրցույթի խնդիրների քննարկում,լուծում,վերջնարդյունքների քննարկում:	3
5	,,Իմ դպրոցը,, կայքի առաջադրած խնդիրների քննարկում, բազմաեղանակ լուծումների առաջարկում:	3
6	Գիտավերլուծական հանդես ,, Քվանտ,, խնդիրների լուծում և քննարկում	3
7	,, Կորյուն Առաքելյան,,. Հետաքրքրաշարժ խնդիրներ	2
8	Հետաքրքրաշարժ խնդիրներ 7-12 դասարանների համար	4
9	Մասերով խնդիրների քննարկում. (Տոնոյան. ,, Մաթեմատիկայի խնդիրների շտեմարան,,)	3
10	Հանդիպում օլիմպիական հայկական թիմի մարզիչ Ա. Սահակյանի հետ	1
11	Ճշմարիտ և կեղծ ասույթներ	1
12	Խառը խնդիրներ	3
13	Հատուկ խնդիրներ մաթեմատիկայի խմբավարների համար	2
14	Պատմական խնդիրների քննարկում 5-7 դասարաններում	2
15	Հունվարյան օլիմպիադաների բոլոր դասարանների խնդիրների քննարկում	2